Հայաստանի հանրային հեռուստատեսության արխիվային ձայնագրությունները թվայնացնելու համար նախատեսված սարքավորումների բարելավման ծրագրի բացման հանդիսավոր արարողությունը

2019թ.-ի սեպտեմբերի 19-ին Հայաստանի հանրային հեռուստաընկերությունում ընդհանուր մշակութային դրամաշնորհի շրջանակում տեղի ունեցավ Հայաստանի հանրային հեռուստատեսության արխիվային ձայնագրությունները թվայնացնելու համար նախատեսված սարքավորումների բարելավման ծրագրի բացման հանդիսավոր արարողությունը: Ծրագիրը ստորագրվել է Ճապոնիայի և Հայաստանի կառավարությունների միջև 2017թ.-ի մարտի 30-ին և ուղղված է Հայաստանի միակ հանրային հեռուստաընկերությանը ապահովելու արխիվային տեսագրությունների թվայնացման սարքավորումներով՝ ընդհանուր առմամբ 137,900,000 ճապոնական իենի սահմաններում:

Արարողությունը տեղի ունեցավ ճապոնական կողմից ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադայի, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) Վրաստանի գրասենյակի մշտական ներկայացուցիչ պարոն էջիրի Յուկիհիկոյի և հայկական կողմից ՀՀ վարչապետ պարոն Նիկոլ Փաշինյանի, Հայաստանի հանրային հեռուստառադիոյի խորհրդի նախագահ պարոն Արա Շիրինյանի, Հայաստանի հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրեն տիկին Մարգարիտա Գրիգորյանի ներկայությամբ:

Արարողությանը հաջորդեց շրջայց հեռուստաընկերությունում, ներառյալ արխիվների նոր շենքը, որտեղ տիկին Գրիգորյանը ներկայացրեց նոր տեղադրված արխիվային սարքավորումները:

Շրջայցին հաջորդեց բացօթյա համերգ՝ կատարված Հայաստանի պետական կամերային նվագախմբի կողմից և նվիրված հայ հռչակավոր երաժիշտների և ստեղծագործողների՝ Կոմիտասի, Հովհաննես Թումանյանի, Տիգրան Մանսուրյանի և Ռոբերտ Ամիրխանյանի հիշատակին: Համերգին ներկա էին ՀՀ վարչապետ պարոն Նիկոլ Փաշինյանը, ՀՀ Ազգային ժողովի նախագահ պարոն Արարատ Միրզոյանը, Երևանի քաղաքապետ պարոն Հայկ Մարությանը, ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար պարոն Արայիկ Հարությունյանը և այլք:

Հայաստանի հանրային հեռուստա-
ընկերության գործադիր տնօրեն տիկին
Մարգարիտա Գրիգորյանի ելույթը

Դեսպան Յամադայի ելույթը

Տիկին Գրիգորյանը ներկայացնում է
սարքավորումները

Դեսպան Յամադան քննարկում է
սարքավորումները ՀՀ վարչապետ պարոն
Փաշինյանի հետ



Ճապոնիայի կողմից տրամադրված որոշ
սարքավորումներ

Հայաստանի հանրային
հեռուստաընկերությունում դեսպան
Յամադայի հարցազրույցը

Բացօթյա համերգ արարողությունից հետո

Դեսպան Յամադան և վարչապետ Փաշինյանը համերգը դիտելիս

Դեսպան Յամադան զրուցում է վարչապետ Փաշինյանի հետ